

U R N H A L E  
Z W L S H W

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

Թ. Ե. Բ. Բ. 30 Փ. Ա. Բ. Ա. 3

ᐱ. ᠒᠙

ԼՐԱՂԻՐ Թերթերնիս Պա-  
տերազմական Խորհրդոյ որոշ-  
մամբ դադրած ըլլալով: Սինչե  
որ Թերթերնուս վերահրատա-  
րակութեան արտօնութիւնն ու  
հրամանք յաջողինք ստանալու,  
որոշեցինք սոյն Մէճմուայք—  
Հալաթիս Թերթը գնոյ առնե-  
լով յուղարկել մեր պատուար-  
ժան բաժանորդաց, թէ՛ զա-  
նոնք առանց Թերթի չթողելու  
և թէ՛ միանգամայն իրենց ու-  
նեցած բաժանորդագրութեան  
հաշուէն պարտքերնիս ասով  
վճարելու համար, զոր ի գի-  
տութիւն Լրագրոյ բաժանոր-  
դաց՝ յատկապէս ծանուցանել  
հալի համարեցանք:

ጊዜ ሆኖ ፊት-ረዳቱን ጥፍቷል።

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թայյիշի Թղթակիցը հետևեալը կ'հեռագրէ Պուքրէշէն հոկտ. 3 Թուով :

Տաճկներն անդործ կ'լինան  
Սիլիսթրէ, Օսմ. եզրին ամենէն  
մատագոյն եղած մէկ կղզեակը  
կամուրջ մը շինած են, բայց ի-  
րենք վերջերս նաւակներով Բու-  
մանիա անցան: Սիլիսթրէի դէ-  
մը դռնուած 3 կղզեակներն  
ալ Տաճկացն էն, ուստի և բը-  
նական է թէ այդ կղզիներն կա-  
մուրջ պիտի ձգեն, իրենց զօր-  
քերուն վառելու վայտ ճարե-  
լա համար:

Անկտնաններն անցեալ օր  
գետն անցան, իսկ առանց գործ  
մը տեսնելու ետ դարձան: Սի-  
լիսթրէի դէմը Դանուրի եղեր-  
քէն մինչև Գալսրաշ բռնած  
տեղը 9 քիլոմէթրօ է, և մէջ  
տեղի երկիրն ալ ճաշիճներով  
լեցուն է, որոնք անցուդարձը  
կ'գոռարացնեն: Բումէք այն-

Քան միծ վախ մը չունին թէ  
Սամանցիք այս կողմը կարենան  
մեծ գործ մը տեսնել :

կայա. Ա. զօրաբանակէն և  
վաշտ հետեակ անցնելով այսօր  
Պուրքէշէն դէպ ի Դանուբ ու-  
ղեւորեցան։ Ասոնց իւրաքան-  
չիւր խմբին մարդիկն ալ ամ-  
բողջ էին, որ չտեսնուիր բնաւ  
միւս զօրաբանակաց մէջ։

Հաւեգարիյ մէջ նոր երեսան  
երաժ գաւաղգրութիւնը հոս  
մեծ զայրոյթ պատճառեց . իսկ  
խահապան մարդիկ Վրսն թէ՛ի  
դ.երև ելաժ այս փորձին հե-  
տեանքը պիտի ըլլայ աւստր.  
իշխանութեանց հսկողութիւնն  
ու աշխրջութիւնը կրկնապատ-  
կել , և թէ ալլես ապագային  
մէջ ի նշանատ Տաճկաց այսպի-  
սի գործողութեանց վտանգի  
մը յառաջ չգալը :

Ի պրայիլէն եկող յոյն կա-  
մաւորաց խումբ մը , որ Յու-  
նաստան կերթ՝այ կոր , գիշերն  
հոս անցուց :

—Տէյլի Նիուզի թղթ ակիցն  
ալ Ասիոյ կողմէն հետեւեալ տե-  
ղեկութիւնները կ'հաղորդէ :

Ռուսական զորքերն իրենց առջի գրաւած դիրքերնին թողլով ետ քաշուեցան, յագնաթենէն խռոված բլլալով, ձիերնին ալ ջուր և ուտեղիք չունենալուն համար, Երեկոյեան ժամը 3ին ռուսք Գրգըլ Թէրէն կ'աջադէին, երբ Մոսկովար բաշա ալ, վախնալով որ Կարսի հետ ունեցած հազորդակցութիւնը կ'որրի, ռուսաց կեդրոնին գէժ յարձակեցաւ 20 վաշտ զօրքով, լրտեսք սխալ տեղեկութիւն առած բլլալով իրեն թէ կեդրոնի բանակը ամենէն անգարն է, Ուստի երկու բանակաց մէջ տեղի ընդարձակ դաշտէն սկսաւ յառաւ քաղել առջեւէն 3 կարգ արծակաւարտ (յարգածը), պահետի զօրք և 2 պաթարեա ալ թնդանջմ ու

Դեհնաւով, ոյն ինչ Գըզըլ Թէքէի  
 Թնդանօթներն ալ ուժգին ռմ-  
 բաձգութեամբ մը՝ իւր յառաջ  
 խաղաղութիւն կ'պահպանէին :

Ուստաց հրամանատարն էր  
Հայման զօրապետը ։ Ատոնք Մի-  
քայել մեծ դժբախտ աշաց ասուլը  
պատերազմի սկսան , ուժդին  
ռմբակոծութեամբ մը դիմաւոր-  
եիլով թշնամին , յետոյ ռուս  
արձակամարտներն շուտով մը  
յառաջանալով , խառնաշփոթ  
ետ մղեցին տաճկներն , զաննք  
մինչև Մուկաթան հաւածելով  
դեռ մութը կոխելն ետքն ալ  
Տաճկներն բոլորովին վճատած  
ամեն կողմէն ցիրուցան կ'փախ-  
չէին ։

Վազն ամբողջ դեմն վրայ  
մեծ պատերազմ մը կ'ապաստուի  
յորում Կարսի հետ Մուկիթար  
Բաշայի հաղորդակցութիւնը  
կտրել կ'ուսանք, Ռուսաց կո-  
րուստներն դեռ յայտնի չէ-  
նակայն 2000ի չափ ջօրք պակ-  
սած նշանակուեցան :

—Պու. քրէշ 7 հակա Ռուսի-  
ոյ գահաժառանգ իշխանը  
Եանթրոյի բանակի հրամանա-  
տարութիւնը վրայէն առնուած  
ըլլալով, Ս. Բէթէրպուրի պի-  
տի հրթրայ շնոր պահեստի գո-  
րակումս մը կազմելու համար  
—Սրպիոյ մէջ պատերազ-  
մական օրէնք հրատարակուե-  
լէ :

—Սրպիտոյ արտաքին գործոց  
պաշտօնեայն Պէլկրատի հիւ-  
պատոսաց յայտներ է թէ Սեր-  
վիա պատերազմի մօտեկէ ետ  
չպիտի կրնալ կենալ, կրնէ թափ-  
ալբաթ :

—Վիէննայի թերթերը կը  
սեն թէ Բուսնիոյ ու Սրաբիյ  
մէջ յարձակողական ու պաշտ  
պանողական դաշնակցութիւն  
մը կ'ընտած ըլլալով, մօտ օրէն  
սերպո—բուսնական դաշնակի  
բանակ մը Վիսլինի վրայ պիտի  
սկսի եղեր քաշել :

— Թալմազի վիճննայի թղթա-  
կիցը, Ասիայ կողմը տեղի ունե-  
ցած վերջին ճակատամարտին  
վրա Ռուսաց և Օսմանցոց տե-  
ղեկագիրներուն մէջ եղած հա-  
կասութիւնը հետեւեալ կերպով  
կ'ըզդատուի :

Ուսուց թնդանթածիդ զօ-  
րաց զօրքաւածին մը օգնութիւն  
տոանալէն ետեւ , ձմեռը վրայ  
չ'հասած մեծ հարուած մը տա-  
լով, Մոսկովթար բաշայի բանա-  
կը իր քանի մը շաբաթ առաջ  
Խահնդէրի լեռանց վրայ սըռ-  
նած գիրքերէն վանելու պա-  
տեհ առիթ համարեցին :

Առաջին օրը հովտ. շինյա-  
ջողեցան Պիւլուք Եանհին առ-  
նելու, թէպէտ մեծ կորուստ  
տալով, զոր նոյն իսկ իրենք 60  
սպայի և 3000 զօրքի կ'էնանեն։  
(Ում բանակին կեդրոնը ճղքեցին  
և Մուխթար բաշայի աջ թևին  
կարսի հետ ունեցած հազոր-  
դակցութիւնը պահ մը կտրուե-  
լով Արբաշայիի վրայ նետուե-  
լու վտանգին ենթարկուեցաւ  
ուր ուրիշ զօրազունք մ'իրեն  
կ'ուղատէր։

Ռուսք կարտի պահակազորքին  
դէպ ի դուրս մէկ յարձակումն  
ալ ետ մղեցին, բայց Օսմանցոց  
ֆիւլիք Էահնէլէրի բռնած  
գիրքերուն չկրցան տիրել: Մի-  
կէնդն ժամանակին ալ Օսման-  
ցոց ալ թիւին դէմ յարձակելով  
ոչ միայն ետ մղուեցան այլ և  
հետեւալ առաւօտուն Օսման-  
ցիք յարձակողական գիրք  
բռնեցին, և թէպէտ ռուսաց  
ընդհանուր հրամանատարը  
յաջթութիւնք իրեն կ'ընդդէմ  
սակայն կ'առտովանի ալ թէ  
հսկտ. Չին առած Պէյուք Եհս  
նիի գիրքը Յին թողուց: Այս-  
յետս նահանջման պոտնառ  
ինչ ալ կ'ուզէ բլլայ, առ  
կապացուցանէ թէ Ռուսք ի  
րենց ձեռնարկութիւնք չ'կրցա-  
ն զլուխ հանել:

Այս երկու օրուան պատե-  
րազմներուն վրայ հասած ման-  
րամանութեանց նայելով, կե-  
րեայ թէ ուսուք չընտարած  
մեծ շարժում մ'ընելով, Մուխ-  
թար բաշտի բանակը մէկ հար-  
ուածով ջախջախելու փորձ մ'ը-  
րին :

— Պուրքէշէն հոկտ. 4 թու-  
ականաւ հետեւեալքէր թայ-  
մըզի: Այսօր բանակէն բնաւ  
լուր չկայ, ձմեռն ալ Դանուբի  
մէջ հաղորդակցութիւնը շա-  
րունակելու համար լաւագոյն  
միջոց մ'ընտրելու վէճ կայ:  
Վերջնական կերպով երկու բը-  
լան առաջարկուած են. ասոնց  
մէկը կամուրջ մը շինելու մէջ կը  
կայանայ, որն օր խողովակի  
ձեւով երկաթեայ տակառներու  
վրայ պիտի զետեղուին. այդ  
տակառները 4 ոտք տրամագի-  
ծով, իրարմէ նուազ հեռու  
գլխաւոր գրուելով, խորիսխ-  
ներով կապուած և ջուրին վը-  
րայի սառերը մէկ կողմ ընելու  
համար գործիներ ունեցող տե-  
րակ մը լատտանաւ պիտի ձե-  
ւաձեն: Նոյն խոկ այդ լատտա-  
նաւներուն վրայ պիտի շինուի  
կամուրջը: Երկայիք ծախքը  
5-000-000 ֆրանք կ'հաշուեն:

Միւս բլանք, նաւակամուրջ-  
ներու անգործածելի եղած ա-  
տեն, բոլոր նիւթական պէտքե-  
րը գետէն փոխադրելու հա-  
մար, պղտիկ շագենաւներէ  
բաղկացեալ նաւատորմ մը  
պատրաստելու մէջ կ'կայանայ:  
այս բլանք առանց դժուարու-  
թեան կրնայ ի գործ դրուիլ,  
որովհետեւ Հիւսսին գետակին  
մէջէն անցնող 'դարձող' նաւերը  
ամբողջ ձմեռը Նիւս Եօրքի մէջ  
կ'երթան, ուր հասնաք  
տեղի շատ է քան Դանուբէն  
ի Ջիլթով և ջերմութեան տա-  
տիճանն ալ աւելի վար:

Բանակին մատակարար  
տեսչութեան ուղարկէն մին  
Ռուսաստան երթալու հրաման  
ստացուաւ բանակին համարա-  
նոցները աչքէ անցնելու համար:  
Բումանիյոյ ճամբաները բը-  
նաւ աւրուած չեն, իսկ Պուլ-  
կարիյոյ ճամբաներուն համար  
ալ կ'ըսուի թէ աշիքան լաւ վի-  
ճակի մէջ 'են' որ տեղացած  
անձրեւներէն ետքը բնաւ չէր  
յուսացուէր այդ:

— Ռուսքի Միւր թերթը,  
իր սեպտ. 6/12 թուոյն մէջ  
յօդուած մը հրատարակելով  
Պուլկարիոյ մէջ պատերազմելու  
համար ուստաց պատահած  
բնական դժուարութիւնները  
կ'խոստովանի:

Կըսէ թէ գործողութեանց  
կեդրոնը խիստ ընդարձակ է-  
լալով, բացարձակաբար անկա-  
րելի է որ ուսուք ճակատամար-  
տի գաշտին վրայ մեծ զօրու-

թիւն համախմբեն:

Օսմ. զօրաց իրական մոլե-  
ռանդութիւնն ու անլուր հա-  
տատմամբութիւնն այս պատե-  
րազմը այնպիսի կռուի մը դար-  
ձուցին որ և ոչ մէկ կէտի մէջ  
Ֆրանգո-Գերմանական պատե-  
րազմին չ'նմանիր: Թուրքիան  
յաղթելու համար, պէտք է որ  
(600-000) մարդով յարձակէինք,  
բայց այնպիսի ահագին բա-  
նակ մ'ալ հողալու համար այն-  
պիսի աղբիւրներ պէտք են զոր  
չ'ունինք, և սրք՝ փոխադրու-  
թեան ներկայ միջոցներով իսկ  
իրականութիւն չեն կրնար գըտ-  
նալ:

Միւս կողմանէ, եթէ Սեւ  
ծովու ճանքուն զիմէինք մեր  
պաշտները փոխադրելու հա-  
մար, նաւատորմի մը պէտք  
պիտի ունենայինք որպէս զի  
մեզ պաշտպանէր:

Ասկէ զատ, Սուլթանի ձեռ-  
վելըը մինչև Պուլկար գրաւե-  
լու համար, բոլոր օսմ. առաջին  
կարգի բերդաքաղաքներն պա-  
շտելու պիտի ստիպուէինք,  
որն որ ներկայ պատերազմը  
խառնաշփոթ տեսարան մը պի-  
տի ընծայէր:

## Ա Ջ Փ Ա Յ Ի Ն

Չմիկածագի վիճակը, որն  
որ բուական երկար տարեկոյն  
հետէ անգործ և ապուհով վի-  
ճակ մը կ'վայելէր տեղական կա-  
ռավարութեան աշարջութեամբ  
բընե Տէրսիմի քրդաց դէմ ձեռք  
առած խիստ և անաչառ մի-  
ջոցներով, ներկայ պատերազ-  
մին սկսելէն ի վեր է որ յիշ-  
եալ վիճակն իր անգործութիւ-  
նը կորուսած էր նորէն քրդաց  
երեսէն, որոնք տէրութեան զօ-  
րաց բացակայութենէն քաջա-  
լիրեալ, առիթ մը գտածուն  
պէս, սա կամ նա գիւղը յար-  
ձակելով, այլեւալ չարիք ու  
զրկանք հասցնելու վրայ են  
գիւղացի բնակչաց, որոց գրե-  
թէ բոլորն ալ Հայերէն կ'բաղ-  
կանայ:

Բնակիչք բողոքած ըլլալով  
առ կայս. կառավարութիւնն  
Քրդաց գործելու սկսած սոյն  
չարեաց և անկարգութեանցը  
դէմ, ինչպէս նաև Պատրիար-  
քարանն ալ երկրորդած և ջա-  
տագոված լինելով սոցա այս  
ինքերը, մեծ Եղարդոսին և  
ներքին գործոց պաշտօնեայ  
Ճէվտէթ բաշային առ կուսա-  
կայութիւնն կարող զրկած որոշ  
և ազդու հրամանացը վրայ,  
այս անգամ՝ ուրախութեամբ  
կիմանամք թէ Էրզրկայի միւ-  
թէսարքիութեան ձեռք քրե-  
նութիւն մը բացուել է, որոյ  
համեմատ Չմիկածագի բոլոր  
Հայերնակ զիւղերէն ալ 3-4 ա-

կան անձինք ընտրուելով, ա-  
տոնցմէ յատուկ յանձնաժողով  
մը պիտի կազմուի, կառավա-  
րութեան ցոյց տուած պաշտո-  
նակալի մը նախագահութեամբ:  
Բը, որոյ քանի մը տաճիկ քըն-  
նիչներ ալ պիտի անդամակցին:  
Յանձնաժողովոյ պաշտօնը պի-  
տի ըլլայ քննել, իմանալ գիւ-  
ղացւոցմէ և ընդհանուր տեղե-  
կագիր մը պատրաստել թէ  
Քրդերն որո՞ւ ինչ վնաս հասու-  
ցեր, որմէ՞ ինչ յափշտակեր  
կամ կողոպտեր են, որպէս զի  
սոյն տեղեկագրին վրայ՝ կա-  
ռավարութիւնն ալ հարկ եղած  
միջոցներն ձեռք առնէ փոս-  
տոնքը փոխարինելու և ան-  
կարգութեանց ու չարեաց նո-  
րէն անգամ մ'ալ կրկնուիլն ար-  
գիւելու համար:

Կ'հաղորդեն մեզ թէ արդէն  
քանի մը գիւղերու Հայերն  
հարցաքննութեան կանչուելով,  
կ'վարանին եղեր ցաւերին ու  
գանգատնին անկեղծօրէն յայտ-  
նել, վախալով որ մի' գուցէ  
Քրդերն իրենց թշնամի ընելով  
զանոնք իրենց դէմ վերջէն վը-  
րէժխնդրութեան գրգռեն, և  
խոստացուած միջոցներն ձեռք  
չկարենալով առնուիլ, դարձ-  
եալ իրենք նոցա բռնութեանը  
եթարկուին: Ուստի իրենց սոյս  
միտէն՝ ճշմարտութիւնը յայտ-  
նել, չհամարձակելով, աւելի տը-  
րամադիր են եղեր ըսելու թէ  
իրենք քրդաց դէմ գանգատ  
մը չունին:

Հետեւորար եթէ յիշեալ  
քննիչ յանձնաժողովն ալ իրօք  
և անկեղծօրէն գործոց իրա-  
կանութեանն ու ճշմարտու-  
թեանը վերահասու ըլլալ կը  
բաղձայ, իսկզ՞ գիւղացւոց այս  
արգար և իրաւացի երկիւղը  
նկատողութեան առնելով, գոյդ-  
փարատելու, ինչպէս նաև զա-  
նոնք իրենց գիտցած ու կրած  
չարիքը յայտնի և աներկիւղ  
խոստովանելու վիճակի մը մէջ  
դնելու համար, արգարութիւ-  
նը կ'պահանջէ որ նախառաջ  
յիշեալ գիւղացւոց ապագայն  
հաստատ և զօրուոր տպահո-  
վութեան տակ առնուած ըլլա-  
լուն վրայ համազէ և մատահա-  
ցրնէ զանոնք, որով միայն կա-  
րելի կըլլայ բաղձացեալ ճշմար-  
տութեան հասնիլ:

— Անցեալներն ծանուցուե-  
ցաւ թէ Տէրսիմի քրդերէն 5  
հօգի, մոյրաքաղաքիս մէջ տա-  
րի ու կէսէ ի վեր բանտարկու-  
թեան պատժոյ ենթարկուած  
ըլլալով, պայրանաժամներն լը-  
րանալուն վրայ ազատ տրձակ-  
ուել էին բոնտէն, և մօտ օրէն  
վերստին իրենց երկիրը գառ-  
նալու կ'պատրաստուէին:

Այս անգամ կիմանամք թէ  
յիշեալ 5 ֆիւրտերն, ճէվտէթ

բաշայի հրամանաւ արգիւրեւեր  
են հայրենիքին դառնալէ, ի-  
րենց նկատմամբ քննութեան  
արժանի ինչ ինչ իրողութիւն-  
ներ կեցած ըլլալուն պատճա-  
ռաւ:

— Կ'իմացնեն մեզ թէ Ջը-  
մըշկաժողով վիճակին մէջ ալ  
Գոմարացի բուած լեռնցի ա-  
ղքատամներն, որոնք քիւրտ  
կամ քիւրտէ տարբերութիւն  
չունեցող տաճիկներ են կըսուի,  
անցեալներն Արապկիրու էհնէ-  
ցիք գիւղէն՝ անցեալ տարի բո-  
պանուած իրենց մէկ ընկերին  
տրեան գնդի փոխարէն ատոնց-  
մէ պահանջած ստակին չկարե-  
նալով ստանալ, վերջերս օր մը  
յանկարծ արտը կ'յարձակին և  
գիւղացւոցմէ երկու երիտա-  
սարգ բռնելով կ'առնուն միա-  
տեղ բռնութեամբ լեռը կ'տա-  
նին: Հոն խոսիւ տանջելով և  
անօթի պահելով զանոնք, գիր  
գրել կ'առն ասոնց ազգականա-  
ցը, որ 70 հազար զշ. փրկանք  
բերելով զիրենք ազատեն: Հա-  
գիւ գիւղացւոցմէ ոմանք մէ-  
ջերն հանգանակութիւն մ'ը-  
նելով, քանի մ'անձինք ծանօթ  
քրդին մէկուն ձեռք 20-000  
դշ. կ'տանին և կ'յաջողին յիշ-  
եալ երկու երիտասարդներն ողջ  
առողջ ազատելու:

— Այնպիսի լիճ գիւղէն վեր-  
ջին թիցթարեով մոյրաքաղաքս  
հասած նամակէ մը՝ հետեւեալ  
ցաւալի լուրը կ'արդէմք:

Պետրոս անուն հայազգի  
թիցթարար մը օգոստ. 28ի կի-  
րակի օր ժամը 10ին միջոցները  
քաղաքէն վերադարձին Չօրի-  
Պօղաղը բուած վտանգաւոր  
տեղը 4 հատ զինեալ աւաղակ-  
ներու կ'հանգար, որոց 2ը դա-  
րան կեցած, միւս 2ը յանկարծ  
վրան կ'յարձակին: Հայազգին  
զայս տեսնելուն պէս ջորին կը  
թողու և կ'փախչի, իսկ աւա-  
ղակները զինքն հալածելով և  
դարանամուտ եղող միւս երկու-  
քն ալ զանի դիմաւորելով կը  
պոչարեն զինքը, որոյ վրայ ճա-  
րահատեալ՝ անձնատուր ըլլալ  
կ'ստիպուի: Աւաղակները ու-  
քէն մինչև գլուխը մերկացնե-  
լով զանի կ'կողոպտեն, պայու-  
սակները բարձր ջորին ալ կ'առ-  
նեն, և զինքը կապելով կ'տա-  
նին զէպ ի կաշոյ գիւղին գի-  
մացները, ուր գիշերուան ժա-  
մը մէկին միջոցները գրեթէ հը-  
րաշքով մը կ'ազատի, և նոյն  
գիշերը այս կողմերը թափառե-  
լէն վերջը, հետեւեալ առաւօ-  
տուն Մանապուտ գիւղը կը  
հասնի, և հոն տեղի ծանօթ  
յիւրէն մէկը հետն առած, մի-  
ատեղ կ'երթան Օվաճըզ, ուր  
վայրենի աւաղակաց որջը հե-  
տագտելու, որ մինչև ցարդ  
անաւիկ և անմաշկի աւել մը

համարում է: Հոն խել մը առին ի դուր դեղերէն վերջը, հետք մ'անդամ: գտնելով ձեռնաւորն հտ կ'գառնան և 8 օրէն վերջը յիշեալ Պետրոս առնին հալաղիկն նորէն լիճ գիւղը կ'գայ: Երկու օրէն յետոյ հիւանդութեան նշաններ կը տեսնուի վրան, երրորդ օրը ակռայները կ'կոկոխուի մինչև և բեկոյ, որ ատեն հաղիւ բերանը կ'բացուի, բայց սարսուռն ու անհանգստութեան նշաններն կը կենան վրան, յայտնի կ'երևի թէ ստատիկ վարդեր է, անկէ ի վեր հիւանդանալով անկողնոյ կ'ծառայէ եղբւր:

Նամակագիրը կըսէ թէ աւազակներն նոյն կողմի քիւրտերէն են եղեր, կողոպտուած ստակն ու վաճառքը ընդամենը 4000 զէն աւելի արծէք մ'առնէին, որոյ մէջ յորին 1200 զէն աւելի արծողութիւն մ'առնէ, և առձեռն ստակն ալ 1830 զէն եղեր, մնացեալ վաճառացի մէջ հաղիւ 200 զէն չափ ապրանքը ուրիշինն ըլլալով, մնացած բոլոր կորուստն ալ չնքը կրած է խեղճը:

### ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Բարիկ 15 հոկտ.

529 ընտրութիւններէն 117 արդէն ծանօթ են: 311 հանրապետականք և 195 պահպանողականք ընտրուած են: 11 ընտրութիւն կոյ համեմատականի մնացած, մեծ մասը պահպանողականաց նպատակաւ 12 ընտրութիւնք կան դեռ անծանօթ:

Հաւանական է որ յառաջիկայ երեսօր ժողովը պիտի առնենայ 320-325 հանրապետական և 205-210 պահպանողական:

Արտաքին գործոց նախարար Տըքազ դուքան ալ երեսօրին ընտրուեցաւ:

Համեմատական քուէարկութիւնը հկամ: 28ին տեղի պիտի ունենայ:

Քանի մը լրագիրք կ'հաստատեն թէ կառավարութիւնը քանի մ'աթոռ շահեցաւ, սակայն թէ կառավարութիւնն և թէ ընդդիմադիր կուսակցութիւնը խաբուեցան իրենց յայտերուն մէջ, Յիշեալ լրագիրք կ'յուսան որ տոյ արդիւնքը կը գիւրացնէ փոխադարձ զիջումներն, և այսպէս վերջ կ'գտնէ այս տագնապն, յորմէ ամեն մարդ յոգնած է:

Վիեննա 15 հոկտ.

Կէս պաշտօնական թերթերը կ'ծանուցանեն թէ հաշտութեան համար միջամտութիւն չկայ:

Պ. Քրիստի երեսփոխաններէն ամանց հետ տեսակցեցաւ:

Լոնտոն 14 հոկտ.

Անգղիոյ Պանդոպին 150-000

ոսկւոյ գումար մը յանձնուեցաւ:

### ՆԵՐՔԻՆԼՈՒՐԵՐ

Օհան Էֆ. Պէրլինի օսմ. դեպքանատան առաջին քարտուղար, և Ս. Բէթէրպոլի դեպքանատան նախորդ քարտուղար Միհրան Էֆ. ալ վիճակնորի դեպքանատան երկրորդ քարտուղար անուանեցաւ:

—Մայրաքաղաքի ժողովրդեանը մէջ 30-000 խրդա, նոյնքան զոյգ բրդէ գուլպա և սունապան ժողովուրդ է կայսրականին զրկուելու համար:

—Դաւղլիոյ բանակին մէջ զենդանային աստիճանաւ ծառայութիւն ըրած, իսկ այժմ Բարիկի զինուորական վարժարանին դասատու Պ. Ժօզէֆ տը Պիւսքի Հունգարացին շաբաթէ մ'ի վեր է մայրաքաղաք հասեր է, Եւրոպական թերթերէն ոմանք կըսեն թէ յիշեալ պաշտօնակալը կանչուեր է Դանուբեան բանակը զրկուելու, ոմանք ալ կըսեն թէ անգղ. Պէյքըր զենդանային օգնելու համար կանչուեր է, նոր օսմ. ժամատրմայի կազմակերպութեանը գործոյն մէջ:

—Պէշիքա կեցող անգղ. նաւատորմին վրայ վերջին շաբաթուա ուրիշ Էրկու զրահաւոր ալ աւելցուեր է, որով այժմ յիշեալ տորմիդը բաղկացնող նաւերուն թիւը 27ին հասեր է:

—Յայտնի է թէ Օսմ. Պանքայէն ծանուցեալ գողութեան մը գէպքին համար, Մ. Էֆ. Սիմօնօվիչ և ընկերներն 3 տարի բանտարկութեան պատիժ կրելէն յետոյ ազատ արձակուեր էին:

Կ'իմանա՞մք թէ այս անգամ ալ Օսմ. Պանքան գողցուած գումարը, որ ինչպէս յայտնի է՝ 90 կամ 100 հազար ոսկւոյ կը հասնէր, իրենցմէ պահանջելու համար, ամբաստանաւորները հաշտելու սկսեր է, և Սիմօնօվիչ Միլիտի Էֆէնտին ալ տոյ բշ օր ոստիկանութեան միջոցաւ ձերբակալուելով բանտարկուեր է:

Հարկ կ'համարուիք յաւելու թէ առաջի 3 տարւած բանտարկութիւնը գործուած յանցանքին համար էր, մինչդեռ այժմու բանտարկութիւնը՝ գողութիւն վճռուած գումարին հատուցմանը համար է, որ 3 ամիսէն տեւի չտեւեր:

—Տաճկիւն թերթ մը կը ծանուցանէ թէ Գաղաքապետութիւնը, գործառնութեանց գիւրտութեան համար, 10նոյ և 20նոց տամակներ շրջաբերութեան պիտի հանէ եղբւր:

Այս բանն այնքան անգամ

լսեցինք որ այլևս հաւատարմութիւնը մարդուն:

—Կ. Պոլսոյ օսմ. երեսփոխանաց ընտրութիւնը մօտ օրէն Գաղաքապետութեան ապարանք տեղի պիտի ունենայ կըսուի:

—Սուլինա քաղաքը, որ արդէն պարպուած էր, Ռուսոյ այս օրերս բացած ռաւակածութիւնէն բառական միասուեր է. կըսին: Շէնքերուն շատն այրեր է: Քարթալ տնուն արքունի շոգենալը, որ Սուլինայի նաւահանգիստը կ'կենար, չոր օր հոս հասաւ Սուլինայի հրամանատար Հասան բաշայի հետ, բայց յիշեալ շոգենալը նորէն Սուլինա պիտի դառնայ կըսուի, մինչդեռ Հասան բաշա Սև ծով մեկնեցաւ:

—Ֆինլանտիայի ռուսական կառավարութեան հաշոյն, Շբաթի դործարաններէն մեկուն ապապրուած խել մը գէնքերն, երթալիք տեղը զրկելու համար Սթօքհոլմ փոխադրուած ըլլալով, Շաբաթի իշխանութիւնը զրուեր է զանոնք:

—Լիւքսոմբէն հասած լուրերուն նայելով, Հնդկաստանի գրամատկները, նոյն տեղը ժողովրդեան երաշխաւորութեամբ բ. Դրան 20 հազար ոսկի փոխ տալու մտադիր են եղեր:

—Յաճախ կ'ըզիէն հոկտմ. 3 թուով կ'հեռագրեն թէ, երկրաշարժը կ'երակի օրն ամբողջ և զիշերն ալ շարունակուեցաւ, ցնցումը մերթ տկար և մերթ զօրաւոր էր, ժամը 7 1/2ին ուժգին ցնցում մ'եղաւ որ 2 երկվայրկեան տեւեց, կողմայն արեւմտեան կողմը աւելի էր ցնցումը, ծանր փտանգ մը չը պատահեցաւ, շատ մը պատեր ճախեցան, մէկ քանին իրան, օդն աղէկ է, հովը միշտ հիւսիսէն է և ուժգին կ'փչէ:

—Պէրլինի Բօսթ թերթը կըսէ թէ Թուրքիա պայմանագրութիւն մ'ընելով, Անգղիոյ տալ կրցած բոլոր պատերազմական պիտանքները ծախու պիտի առնէ նոր ընկելք փոխառութեանն ի հայել:

—Անցեալ օր ծանուցինք թէ Բերայ կեղծ մէճիտիէ շինող իտալացի գործանենգ մը ըռուեր է: Այս մարդն արդէն ոստիկանութեան կոտորածը հըրտ իրած ըլլալով, ծպտեալ գործակալի մը հսկողութեանը ներթարկուած էր: Իտալացիին տունը կոխուելով կեղծ դրամ շինելու կատարեալ գործարան մը տեսնուեցաւ, ուր և պատաստ գտնուած 186 հատ ամբողջ և 122 քառալի կեղծ մէճիտիէներն կ'գրաւուին, և ինքն ու իրեն հետ մեղսակից գըտնուող կ'ընր միտակց կ'ծերկաւ:

Կալուին, Կերեի թէ այս կեղծ մէճիտիէներէն տակաւին մէկ հատ մ'ալ շրջաբերութեան ելած չէր:

### ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաղբագած կըսէ թէ Սպարապետութեան գուման հեռագիր մը հասեր է, ծանուցանելով թէ երէկ Մուխթար բաշա և զիշեն ռուսաց գէմ յարձակելով, Ալաճա-տագի մօտ մեծ պատերազմ մը տուեր է: Հեռագիրը քաշուած պահուն Ռուսք ետ քաշուելու կոկոխ եղեր:

—Վարնայէն կ'ծանուցանեն թէ Եգիպտոսի Հասան բաշա իշխանը, 6000 հոգիով, Կուէյ դաշտին առջևի գիծերէն Վարնա վերադարձեր է, ուր պիտի կենայ կըսուի:

—Անգղիոյ պաշտօնէս թիւնը արտաքոյ կարգի նիստի մը մէջ որոշեր է բացարձակապէս արգիլել Ռուսիոյ հետ Գերմանիոյ զինակցութեան եղելը:

—Պասիթիթ կըսէ թէ Ռուսոց կեդրոնի բանակէն մաս մը իկաիր Տէր-Ղուկասօֆի զրկուեր է իսմայիլ բաշայի գէմ երեւանը պաշտպանելու համար:

—Դարստաղ 11 օրուան զինադար մը կնքեր է:

—Մաճարացի Բա մանիա անցած ըլլալուն լուրը՝ բոլորովին սուտ ելած է:

Շիրքէթի ընկերութիւնն ալ կ'իմանա՞մք թէ այսօր 10նոց և և 20նոց փոխանիշ տամակներ շրջաբերութեան պիտի հանէ, թղթագրամի փոխարէն ետ տալու պղինձ ստակ չկարենալ գտնելուն համար:

—Խոտոց իւրի եկեղեցւոյ փոխանիշներէն 10 փրնոց կարմիր տամակներուն կեղծը ելած ըլլալով երկու օրէ ի վեր, հաստաբակութիւնը զգուշացնել հարկ կ'համարուի, որ առած տուած տոններն ուշադրութիւն ընեն:

—Աւստրիոյ թղթատարութիւնը կ'ծանուցանէ թէ, ԲՁ-միւսնիոյ և Աղիքսանդրիոյ գիծը բանող շոգենալուց ժամանակներուն մէջ ինչ ինչ պատճառներէ յապաղում տեղի ունենալով, այս շաբաթու ընէ սկըսեալ Զմիւռնիոյ շոգենալը փոխանակ հինգ շաբաթի շոգենալը, որ արեւմտեան Կոստանդուպոլիս օրերը ժամը 10 1/2ին պիտի մեկնի նաւահանգստէս:

—Պէշիքա կեցող անգղ. նաւատորմը մօտեցաւ Կ. Պոլսի պիտի գայ, կըսէ Օսմանլը:

—Սիւսպի նաւորանը շինուած Բէյքի Մէսէրբէթ տնուն քօրվէթը երէկ հոս հասնելով, նաւորանը մտաւ սպառազինուելու:

—Սուլթանի շոգենալը երէկ 7 ուս գերի բերաւ, ուրանք Սէրասկէրի գումար բանտարկուեցան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵՍԱՆ  
ԶԱՒԱՆ ԵՒ ՓԱՌՆԱԿ Ա.

Գրեց ՍԵՐՈՒՆԻ ԳՐԵՆԻՆ ԳՐԱԿԱՆ

Ընթերցասէր ազգայինք որ անշուշտ ազգային տաղանդաւոր հեղինակին «Անուշաւան» և այլ գործերը կ'ընթերցես, մեծ հաճութեամբ պիտի կտորդան այս նոր գործը՝ որ գարձեալ մեր ազգ. Պատմութեան և առնուած է:

Կ'ծախուի Ս. Ղ. և Եղմանեան գրատունը Եփեսոս-Ճամի Զինկերէր ճատտէսի թիւ 2 և ուրիշ գրատուններ:

Գին 1 ֆր. 30 սանդիմ

— 0 —

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆ

ԳԻՆԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՐԵԿՆԵՐ

Մանկերու և Աղակաւոր

Այս վարժարանը իր ուսումնական երկրորդ շրջանը սկսած օգոստոս 15ին իսկական տարւոյն յետոյ և ճիշտ փոքր թիւ 2 նորագ Վարժարանը իր արժանիքը և գեղեցկադիր տունը որ վարժարանի համար իսկական տուն մէջ մէկ հատիկ չէնք է:

Տնօրէնութիւն հասարակութեան բաղձնաւոր ամէն կերպով պատասխանելու համար մեծ խնամ տարած է դաստիարակութեան աշակերտաց բարեկրթութեան առողջութեան և համապատասխան համար այնպէս որ չլարանիք ըսելու թէ ուսանողները իրենց հայրենի տունէն աւելի գոհ և գոաւթ կեանք կ'անցընեն լուրջ հոգեւորական ներքին այնպիսի անձի մը որ իր աստուծոյ զին պատիւ կը բերէ:

Տնօրէնութիւն վարժարանի մէջ մասնաւոր սրահ մը բացած է ցատակահանք մինչև 3 տարեկան տղաները Գերմանացի հոգեւորական ֆր. Բեռնարդ մանկավարժին դրութեամբ կը թելու և գրասենյակը:

Տնօրէնութիւն վարժարանի հինգ հազար կանգունի չափ պարտիզէն օգոստ պիտի քաղէ Եւրոպացի պարտիզպատկութեան դասատուի մը միջոցաւ պարտիզպատկութեան բաղձնաւոր արհեստին սկզբունքն աւանդել տալով բարձրագոյն կտորի ուսանողաց:

Գողթնացի Տիկին Ֆրիտէ բաղձնաւոր կ'ընդ որդէն վարժարանի այսինքն դաստիարակ է. և եթէ գիշերօթիկ աշակերտութեան թիւը 10ի հասնի Ղազարիացի տիկին մը ևս պիտի բերուի մշտնջող աւելի կտոր միջոցի մէջ աշակերտութեան իստակութիւնն ուսուցանելու համար:

Վերջապէս Տնօրէնութիւն կը կարծէ թէ ինչ որ պէտք է այս հաստատութիւնը ազգին օգուտը ընելու՝ ի գործ դրած է. հասարակութեան կը մնայ փութալ անկէ օգուտ քաղելու:

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել ի վարժարանի ամէն օր առ տնօրէն հիմնադիր:

Ե. Ն. Մուրատեան Գ. Ներշարուհի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵՍԱՆ

ԿՕՍԵՆ ՏԵ ՄԻՐԳՈՐԻՍ

ՄԱՐԻՕՆ ՏԸ ԼՕՐՄԻ

ԽՈՍՏՈՎ ԱՆՈՒԹԻՒՆԸ

Թուրքիայի Գր. Զինկերէն Սոյն նշանաւոր վէպին հայերէն թարգմանութեան երկրորդ հատորն ալ Պոլիս հասած ըլլալով, կ'ծախուի Ս. Ղ. և Եղմանեան գրատունը Եփեսոս-Ճամի Զինկերէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրատուններ:

Գին 2 ֆր.

Ամբողջ գործը 4 հատորէ պիտի բաղկանայ:

— 0 —

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ

ԳՏԵՈՒՄՍ

ՓԱՆՍՍԵ

Կոչուած ցաւի դեղը բուրդովն բուսեղեններէ բաղադրուած ըլլալով թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կ'գործածուի ու բաղձնաւոր ցաւեր ու հիւանդութիւններ շուտով կը բժշկէ, ինչպէս որ վարը յիշուած է:

Ամեն տեսակ Գոլի, Ըստման, մէջքի կամ Սղիքներու ցաւեր. ու նաև Թանջ, Քոլէրա և այլ ամառուան հիւանդութիւններ ունեցողները այս դեղէն խմելու են հետեւեալ կերպով: Կէս գաւաթ ջուրի մէջ, դիւր ապուրի գրգռէն աւելի չափաւ, վրան լեցուցուր անուշի գրգալ մը Փանասէ՝ աղէկ մը խառնէ ու խմէ:

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռնցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը մէկ կամ երկու անուշի գրգալ այն բաղադրութեան խմէ: Յօդաւոր իրմամբ իմ, Ուրի ցաւի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կոնակի ցաւերու համար դուրսէն Փանասէ քսելով աղէկ մը չիմելու է: Այսպիսի ցաւի համար քիչ մը բամպակ Փանասէի մէջ թաթիլելով ցաւած աղակային վրայ դնելու է:

Ամեն տեսակ երբոր ցաւի մը համար դուրսէն Փանասէ քսել հարկ ըլլայ, եթէ քիչ մ'ալ խմուի աւելի շուտ բժշկութիւն կը ըլլայ:

Մարմնոյն այրուած կամ ճմլուած տեղերը բժշկելու համար վտանգը պատահածին պէս Փանասէն վրան աղէկ մը լեցնելու է: Դանակով կը կտրուած վերքերը բժշկելու

համար արեւը չի սրած շուտով մը վէրքը կապելու և կապին վրայէն Փանասէ լեցնելու է մինչև որ լաւ մը թրջի: Փանասէ նաև արեան շրջանը կարագացնէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ:

Այս դեղին օգտակարութեանը վրայ երկարօրէն գրելու երբ կը համարիմք. գործածողները զայն միշտ կը գովեն, ու զոգը կրնայ անձամբ փորձել. գինն աժան է: Կը ծախուի Մինասեան և Ընկերաց Սմիթեան վաճառատունը ի Ղալաթիա Կ. Պոլսոյ:

ՆԱԽՆԱԿԱՆ

ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՀՍՀ ՎԱՐՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՅԱՏԱՆԵԱՅ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԳԱՐԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆԱՅ

ԿՐԹԱԿԱՆ

ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՀՍՀ ՎԱՐՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՅԱՏԱՆԵԱՅ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԳԱՐԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆԱՅ

ԳՐԻՆԵԱՅ

Տ. ԽՈՐԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԳԱՐԱՐ

Առաջադիւրժար և Կարգաւար

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Տպագրելու Հրամանաւ

Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՐ

Մեր վարժարանաց թէ՛ նախ. կըրթարանի և թէ՛ զարգացեալ դասուց աշակերտք մինչև հիմա չունէին այնպիսի Գրիտոնէական մը որ կտորը ըլլար նոցա մտքերը գոհացուցիչ կերպիւ լուսաւորել կրնի: Կարգաւարութեամբն ու սրտերն կը թել իարցականի վեհ սկզբունքով:

Այս պատիւը լեցնելու համար Ազգային Կեդ. Վարչութեան Կրթնական ժողովը խնդրած է Գեր. Տ. Խորեն Ս. Արքեպիսկոպոս Եպ. Պէյ յարմարագոյն դասագրքեր յօրինել, որ բոլոր պարագայ մէջ և ամէն դաստիարակ ձեռքը կրնի և Բարոյական առաջնորդող գործիներ լինի: Աշակերտաց համար ալ հրահանգի լինելու ամեն հանգամանքներն ունենան:

Կրթնական ժողովոյն փափաքը լիովին կատարուեցաւ. Եւ ինչպէս որ այս գործոց սկիզբը կը տեսնուի, Ամենապատիւ Սրբազան Արքեպիսկոպոս շայրն ու Կրթնական ժողովոյ Գրիտոնէական խորհուրդը զոհանակութեամբ և աւանդելու չափաւորութեամբ Ս. Եկեղեցւոյ. Նոյնպէս և սովորութիւնն ու օգուտ կար յոյժ ի փառս շոյաւորանի Եկեղեցւոյ և յաւուրն ուստի մանկանց վարժարանաց Ազգիս:

Այս գովաստանքը բաւական է. արշաւորութիւն են թէ՛ Սրբազան

Հեղինակին իրական արժանեաց և թէ՛ սոյն Գրատարաց խնամքը և ընտրեալագոյն ոճով յօրինուած ըլլալուն որոց համար իբր տէր-հրատարակիչ շնորհակցիւնք ոչ ծախք և ոչ աշխատութիւն, որպէս զի այս գրքերը յարմարաւոր պատկերօք և վայելուչ սովորութեամբ ի լոյս ընծայուին:

Քաջայայտ եմք որ այս Գրիտոնէականները Ազգին ընդունելութեանը պիտի արժանանան, մանաւանդ Կրթարանը, որ ոչ միայն Գարոցաց՝ այլ ընդհանրութեան ևս կարի օգտակար պիտի լինի. քանզի Լուսնակեան ընտիր հրահանգներ կը պարունակէ. որոց միջոցաւ միայն կրնամք յուսալ թէ օր մը մեր տունը Կրթնական զարգացումը նմանեցնելով պիտի կարենան զուգընթաց քայլել վարժարանաց հետ և անոնց ընթացիկը նպատակը ըստ կարի: Լուսաւորեալ Ազգերն այս միջոցով զարգացան, որ յարգանք օգուտներն ալ կը վայելին:

Ճ. ՍՐԱՄԵԱՆ

Կը ծախուի գրատարանաց խանութները:

Ի Գ. Ի. Ն.

Մանդ.

Նախնական Գրիտոնէական 50

Կրթական Գրիտոնէական 80

Կրթնական Գրիտոնէական Գր. Գրատունը. Չափազանց. — Յակոբեան խան թիւ 15:

Գրոցաց համար մեծ քանակութեամբ գրողներուն հարկերն 10 զեղչ պիտի ըլլայ:

Ղալաթիա Գ. Դ. 1 Հօկտ.

ԸՆԴՀ. ՊԱՄՏ. ԱՎԺ.

|                 |        |
|-----------------|--------|
| Իաց             | 10 50  |
| Գոց             | 10 52  |
| Իարձր գիծ       | 10 54  |
| Յած գիծ         | 10 50  |
| Փոխ. 65ի        | Փր. 54 |
| » 65ի           | » 55   |
| » 69ի           | » 49   |
| » 75ի           | » 48   |
| Գանձատու        | 17     |
| Սօսիթէ Ժէնէրալ  | 5.05   |
| Սօսիթէ Սթամբուլ | 2.25   |
| Պանք տը Գանթ.   | 2.28   |
| Գրէտի Ժէնէրալ   | 2      |
| Բարձրի          | 1-74   |
| Բում. Կրկնագիծ  | 61 50  |
| Բում. Կարծ      |        |
| Փան. »          |        |
| Տոկոս           | 0/0    |
| Ըջոր            |        |
| Հէվալտիզ        |        |

ԸՆԹԱՅԻՐ ԴՐԱՄԱՅ

(Ս. Դ. Կ. 100 րէս է հաշու)

|                    |        |
|--------------------|--------|
| Անգղ. սակ          | 109.0  |
| Գողթ. »            | 878    |
| Բօլ                | 88.50  |
| Գողթ. արծաթ        | 6.     |
| » Թղթագրամ         | 14.    |
| Գրք. 1917          | 51.2   |
| Հինգից             | 17.20  |
| Մէթալիք            | 2.0    |
| Ճերմակ մէհիտ       | 8.56   |
| Պրիմ               | 162.20 |
| Թղթագրամ գողութիւն | 187.10 |

ՍԱՀԻՊԸ ԻՄԹԻԱԶ

ՊՅՈՒՍ ԳԻՐԻՇՃԵԱՆ

Բէրլինացի բաղարընտա իր-

աւ խանըն գարշուսընտա Պա-

րը սօքաղը Ն. 12: